ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

22.04.2024թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Գ.Ասրյանը- մարզպետի տեղակալ
Հ.Ավետիսյանը- մարզպետի տեղակալ
Կ.Աշրաֆյանը- մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Մ.Դալլաքյանը, Ա.Բեջանյանը, Ռ.Պողոսյանը, Գ.Քարհանյանը, Վ.Հովհաննիսյանը, Ռ.Մարգարյանը, Է.Հախվերդյանը, Ա.Շահվերդյանը, Կ.Ադամյանը, Գ.Բաղդասարյանը, Մ.Սարգսյանը, Ա.Բաղդասարյանը

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների կողմից նախորդ խորհրդակցությունից հետո կատարված և առաջիկայում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ:
(զեկ. մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ)
2. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Ասրյանին՝

1.1 Մշտապես ներկայացնել տեղեկատվություն համայնքների ավագանու նիստերի անցկացման և օրակարգի վերաբերյալ.

1.2 Ներկայացնել տեղեկատվություն «Բուսաբուծության աջակցության պետական ծրագրի» ընթացքի և շահառուների վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Առավել հետևողականություն, պատասխանատվություն և պահանջատիրություն ցուցաբերել տրված հանձնարարականները պատշաճ և ժամկետներում կատարելու ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ ապօրինի շինությունների և շինարարական աշխատանքների վերաբերյալ, շարունակել ամենօրյա հսկողության տակ պահել մարզում պետբյուջեի ֆինանսավորմամբ և սուբվենցիոն ծրագրերով իրականացվող բոլոր շինաշխատանքները:

22/04/2024

X

ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99